

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



- Մարզկենտրոնը՝**  
ք. Իջևան
- Տարածաշրջանները՝**  
Իջևան,  
Տավուշ,  
Նոյեմբերյան,  
Դիլիջան
- Քաղաքները՝**  
Իջևան,  
Նոյեմբերյան,  
Այրում,  
Բերդ,  
Դիլիջան

Տարածքը	2 704 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.1%
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	57
Քաղաքներ	5
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2013թ. տարեվերջին	127.6 հազ.մարդ
այդ թվում՝	
քաղաքային	53.9 հազ.մարդ
գյուղական	73.7 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2013թ.	4.2%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	42.2%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	110 779.4 հա
այդ թվում՝ վարելահողեր	25 605.7 հա

**ՀՀ Տավուշի մարզը** գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մարզը հարավ-արևելքում և հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին և պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին:

**Մարզի** կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2 993 մ:

**ՀՀ Տավուշի մարզը** տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է ՀՀ չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1 900-2 000 ժամ է: Ամառները լինում

են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: Այստեղ են գտնվում Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

**Մարզի** ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք այժմ են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին: Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

**Մարզը** համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

**Մարզի** կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս – Թբիլիսի - Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը: Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

2013թ.-ին Տավուշի մարզի **տնտեսության** հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.8 %,
- գյուղատնտեսություն՝ 4.8 %,
- շինարարություն՝ 5.5 %,
- մանրածախ առևտուր՝ 1.3 %,
- ծառայություններ՝ 0.7 %:

**Մարզը** հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Ծրագրեր են իրականացվում պտղատու այգիների վերականգնման ուղղությամբ: Վերջին տարիներին զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը:

Մարզի **տնտեսության** առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ:

**Բեռնաուղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

**Մարզկենտրոն Իջևան քաղաքը** (2013թ. տարեվերջին՝ 21.0 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ հեռավորության վրա: Մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունը): Իջևան քաղաքը հայտնի է նաև գորգագործությամբ:

**Դիլիջան քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 17.7 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 96 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի


մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը:

**Նոյեմբերյան քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 5.2 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 185 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է:

**Այրում քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 2.1 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 205 կմ է: Այն կայարանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղվածությունը մանրածախ առևտուրն է: Աշխատանքներ են տարվում Այրումի պահածոների գործարանի վերագործարկման ուղղությամբ:

**Բերդ քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 7.9 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 186 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում գերակշռողը բազմաձյուղ գյուղատնտեսությունն է, որի մեջ առանձնանում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը:

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ԽՍԲԵՐԻ, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ**



**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 071	1 066	1 070	1 036	1 012
այդ թվում՝					
խանութներ	652	651	665	672	659
կրպակներ	380	379	369	327	312
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	1	1	1
առևտրի այլ օբյեկտներ	36	34	34	35	39

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Պետական նախադպրոցական	43	45	45	55	55
Ոչ պետական նախադպրոցական	-	-	1	1	1
Պետական հանրակրթական	81	81	81	81	81
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17	17	18	19	19
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	3	3	3	3	3
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	-	-	-	-
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Իջևան	ք. Իջևան	21 021
Բերդ	ք. Բերդ	17 712
Դիլիջան	ք. Դիլիջան	7 887
Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան	5 205
Այրում	ք. Այրում	2 061

**ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ազատամուտ	•Ազատամուտ •Բարխուդարլու	2 642
2	Ակնաղբյուր		506
3	Աղավնավանք		280
4	Աճարկուտ		171
5	Այգեհովիտ	•Այգեհովիտ •Կայան	3 523
6	Այգեձոր		2 398
7	Այգեպար		638
8	Աչաջուր		4 173
9	Արծվաբերդ		3 104
10	Արձիս		1 127
11	Բագրատաշեն		2 808
12	Բաղանիս		835

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:  
 \* Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:  
 \*\* Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարության արձևներ ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2014թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
13	Բարեկամավան		293
14	Բերդավան		3 195
15	Բերքաբեր		491
16	Գանձաքար		3 399
17	Գետահովիտ		1 948
18	Գոշ		1 101
19	Դեբեդավան		615
20	Դեղձավան		284
21	Դիտավան		323
22	Դովեղ		529
23	Ենոքավան		523
24	Զորական		865
25	Թեղուտ		1 483
26	Իծաքար		314
27	Լճկաձոր		411
28	Լուսահովիտ		312
29	Լուսաձոր		671
30	Խաչքառակ		1 793
31	Խաչարձան	•Խաչարձան •Գեղատափ •Ճերմակավան	349
32	Ծաղկավան (Իջևանի տարածաշրջան)		530
33	Ծաղկավան (Տավուշի տարածաշրջան)		953
34	Կիրանց		309
35	Կոթի		2 092
36	Կողբ		4 519
37	Հաղարծին		3 496
38	Հաղթանակ		1 272
39	Հովք		412
40	Մոսեսգեղ		1 908
41	Նավուր		1 137
42	Ներքին Կարմիր աղբյուր		1 026
43	Նորաշեն		1 740
44	Ոսկեպար	•Ոսկեպար •Ասկիպատ	875
45	Ոսկեվան		1 346
46	Չինարի		1 165
47	Չինչին		613
48	Չորաթան		1 006
49	Պառավաքար		1 635
50	Պտղավան		833
51	Ջուջևան		573
52	Սարիգյուղ		1 180
53	Սևքար		2 020
54	Վագաշեն		843
55	Վարագավան		680
56	Վերին Կարմիր աղբյուր		1 728
57	Տավուշ		1 645

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2013թ.**

	Շնորհամենք	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 181	4 819
Ծնվածներ, մարդ	117	54	63
Մահացածներ, մարդ	103	50	53
Ամուսնություններ	49	X	X
Ամուսնալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավերետով, քառ.մ	36.0	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	232	115	117
հանրակրթական	1 260	624	636
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	152	105	47
նախնական մասնագիտական (արհեստագործական)	28	6	22
միջին մասնագիտական	62	26	36
բարձրագույն մասնագիտական	124	72	52
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	29 056	...	...
Մարզիկներ, մարդ	57	13	44
Զբաղվածներ, մարդ	4 644	2 401	2 243
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	161	132	29
բժիշկներ	18	...	...
միջին բուժանձնակազմ	46	...	...
Գործազուրկներ , մարդ	591	355	236
Մոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 910	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	434	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	19 608	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	575	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	39	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	21	X	X
միջին ծանրության	15	X	X
ծանր	3	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: